Հայկասար

Վարչական ղեկավար՝ Հրաչ Բարսեղյան

Հեռ: 098 92 47 06

Մակերես՝ 5,9կմ^2

Բնակչություն՝ 220

Ինդեքս՝ 3025

artur.madoyan.90@mail.ru

Հայկասար համայնքը գտնվում է ՀՀ Շիրակի մարզի հարավ-արևմտյան մասում, Արթիկի տարածաշրջանում: Հայկասարը Արթիկից գտնվում է 9 կմ հեռավորության վրա, Գյումրուց՝ 20 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Սարիբաշ անվանումը: Հայկասար է վերանվանվել 1948 թ-ին: Գյուղի բնակչության նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Կարսի մարզից: Համայնքի բնակչությունը 220 մարդ է:

Գյուղատնտեսական հողերը գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 410.50հա: Հայկասարի բնակիչները զբաղվում են հացահատիկային, կերային, կուլտուրաների մշակությամբ, անասնապահությամբ, մեղվապահությամբ և հողագործությամբ:

Հայկասարն ունի «Կարմիր ժամ» եկեղեցի և «Կարմիր Ավետարան» մատուռ: Համայնքում կա նաև 19-րդ դարի փորագրված հուշակոթող: